# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արևուտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Արևուտ, +37493386688, arevut10@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 28-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունները.

Արևուտ համայնքի ավագանին որոշում է`

Հաստատել Արևուտ համայնքի 2023 թվականի նոյեմբերի 21-ի արտահերթ նիստի օրակարգը հետևյալ տեսքով.

1.Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեից համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված նպատակային հատկացումներ ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության Արևուտ համայնքի Դդմասար բնակավայրի ՕԿՋ-ի և սնուցող ջրատարի կառուցման ծրագրային հայտին համաձայնություն տալու մասին:

2.Համայնքի սեփականություն հանդիսացող շարժական գույքը աճուրդ-վաճառքով օտարելու մասին:

3.Արևուտ համայնքի Թլիկ բնակավայրի արոտավայրերից 23.6261 հա տարածքը <<ԴԱՀԱ>> ՍՊ Ընկերությանը վարձակալության տալու և վարձավճարի չափը սահմանելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ԹԵՆԳԻԶ

ԱԼՈՅԱՆ ՀԱՍԱՆ

ԲԱՔՈՅԱՆ ԶԱԴԱ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՕՍԵՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
# ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արևուտ համայնք
րագածոտնի մարզ, գ.Արևուտ, +37493386688, arevut10@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 29-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՈՒՂՂՎԱԾ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԴՄԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՕՐՎԱ ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ՋՐԱՄԲԱՐԻ և ՍՆՈՒՑՈՂ ՋՐԱՏԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիա ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արևուտ համայնքի <<Դդմասար բնակավայրի ՕԿՋ-ի և սնուցող ջրատարի կառուցման>> սուբվենցիայի ծրագրային հայտը համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ԹԵՆԳԻԶ

ԱԼՈՅԱՆ ՀԱՍԱՆ

ԲԱՔՈՅԱՆ ԶԱԴԱ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԷԴԻԿ ՕՍԵՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արևուտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Արևուտ, +37493386688, arevut10@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 30-Ա

## ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԼԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻՑ 12.81678 ՀԵԿՏԱՐ,ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԻՑ 9.4898 ՀԵԿՏԱՐ,ԱՅԼ ՀՈՂԵՐԻՑ 0.025 ՀԵԿՏԱՐ,ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՂԵՐԻՑ 1.2947 ՀԵԿՏԱՐ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ, <<ԴԱՅԱ>>ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով,հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 25.07.2023թ թիվ 1465-Ա հրամանը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արևուտ համայնքի Թլիկ բնակավայրի արոտավայրերից 12.81678 հա/կադաստրային ծածկագիր 02-047-0113-0016,02-047-0127-0002/,վարելահողերից՝ 9.4898 հա/կադաստրային ծածկագիր 02-047-0113-0021,02-047-0113-0015/, ընդերքի օգտագործման հողատեսքից՝ 1.2947 հա/կադաստրային ծածկագիր 02-047-0113-0012/,այլ հողերից՝ 0.025հա/կադաստրային ծածկագիր 02-047-0223-0003/ հողատարածքները տալ վարձակալության <<ԴԱՅԱ>> ՍՊ ընկերությանը 1տարի 3 ամիս ժամկետով տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարելու համար:

2.Սահմանել տարեկան վարձավճարի չափը մեկ հեկտարի հաշվով՝ արոտավայրի համար 12000/տասներկու հազար/ ՀՀ դրամ, 12.81678 հա հաշվով տարեկան վարձավճարի չափը կազմում է 153801/մեկ հարյուր հիսուներեք հազար ութ հարյուր մեկ/ ՀՀ դրամ,վարելահողի համար 20000/քսան հազար/ՀՀ դրամ,9.4898 հեկտարի հաշվով տարեկան վարձավճարի չափը կազմում է 189796/մեկ հարյուր ութսունինը հազար յոթ հարյուր իննսունվեց/ՀՀ դրամ,ընդերքի օգտագործման հողատեսքի համար 45000/քառասունհինգ հազար/ՀՀ դրամ,1.2947 հեկտարի հաշվով տարեկան վարձավճարի չափը կազմում է 58261/հիսունութ հաձար երկու հարյուր վաթսունմեկ/ ՀՀ դրամ,այլ հողատեսքի համար 25000/քսանհինգ հազար/ՀՀ դրամ,0.025 հեկտարի հաշվով տարեկան վարձավճարի չափը կազմում է 625/վեց հարյուր քսանհինգ/ՀՀ դրամ:Ընդհանուր տարեկան վարձավճարի չափը կազմում է 402483/չորս հարյուր երկու հազար չորս հարյուր ութսուներեք/ՀՀ դրամ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ԹԵՆԳԻԶ

ԱԼՈՅԱՆ ՀԱՍԱՆ

ԲԱՔՈՅԱՆ ՉԱԴԱ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԷԴԻԿ ՕՍԵՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արևուտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Արևուտ, +37493386688, arevut10@mail.ru


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 31-Ա

## ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԵՐԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով <<Գլոբալ Փարթներս Գրուպ>> ՍՊԸ-ի 25.10.2023թ.-ի N ՇԳԳՀ-1023/10 գնահատման հաշվետվությունների հիման վրա համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքային սեփականություն հանդիսացող 11միավոր շարժական գույքերը 11 լոտերով,օտարելու դասական աճուրդ-վաճառքի միջոցով:
2. Հաստատել գույքերի օտարման մեկնարկային արժեքները՝ համաձայն հավելվածի:
3.Համայնքապետարանի աշխատակազմին՝ բոլոր հնարավոր միջոցներով ապահովել աճուրդ վաճառքի պատշաճ կազմակերպումը, հրապարակայնությունն ու թափանցիկությունը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ԹԵՆԳԻԶ

ԱԼՈՅԱՆ ՀԱՍԱՆ

ԲԱՔՈՅԱՆ ՉԱԴԱ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՕՍԵՅԱՆ**

Հավելված
Արևուտ համայնքի ավագանու
2023թ-ի նոյեմբերի 21-ի թիվ 31-Ա որոշման

# Շարժական գույքեր

| Լ Ո Տ | Գտնվելու վայրը | ԱՆՎԱՆՈՒՄ | Արտադրության տարեթիվը | Մեկնարկայինգինը - դրամ | Կարգա-վիճակ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Գ.Արևուտ | Ավտոմեքենա ՄՄԶ 45021 | 1985 | 298000 | Անսարք |
| 2 | Գ.Արևուտ | Ավտոմեքենա Գազ 52 | 1981 | 32500 | Անսարք |
| 3 | Գ.Արևուտ | Կշեռք/ավտոմեքենայի/ | 1976 | 207000 | Անսարք |
| 4 | Գ.Արևուտ | Տրակտոր ДТ-75 | 1986 | 209000 | Անսարք |
| 5 | Գ.Արևուտ | Տրակտոր ДТ-75 | 1981 | 187000 | Անսարք |
| 6 | Գ.Արևուտ | Տրակտոր ՅՈՒՄԶ | 1987 | 204000 | Անսարք |
| 7 | Գ.Արևուտ | Շարքացան ՍԶՈՒ 36 | 1984 | 11000 | Անսարք |
| 8 | Գ.Արևուտ | Շարքացան ՍԶՈՒ 36 | 1984 | 11000 | Անսարք |
| 9 | Գ.Արևուտ | Էլեվատոր | 1987 | 12000 | Անսարք |
| 10 | Գ.Արևուտ | Հատիկազտիչ | 1988 | 49500 | Անսարք |
| 11 | Գ.Արևուտ | Կցասայլ | 1985 | 48000 | Անսարք |

Համայնքի ղեկավար՝ Է.Օսեյան